



ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 38

ՀԱՐԱՐ

17 ՄԱՅԻՍ 1908

ԵՐԵՎԱՆԻ ԲԱՆԻՈՂՏՈՒՄ

ՀԱՄԵՐԱՅԻՆ

ԵՐԵՎԱՆԻ ԲԱՆԻՈՂՏՈՒՄ

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

Գ. ՍԱՐԳԻՍՈՑ ԵՒ ԸՆԿ.

Պաշտոնական, Օրգանական-Պաշտոնական հաստատությունների գլխավոր, Թի. 16

Հատոր 40 փաթեթ

(T. آصاوریان) شرکت صنیعہ مطبعہ سی — باب عالی جادہ سندھ نومبر ۰۷

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ



[Զե'նի, ոսի ու ոսի եւ ձեռնի
Վիանգամայն մեքենաներ
Յիւր գրանից

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ աղաւաղի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԹԱՅԹԻՔ ԿԱՅԾ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

[MANUFACTURING COMPANY]



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախողին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ԲԵՐԱ

- (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին .
- (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դէմ.

ԿԱԼԱԹԱ

- (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը.
- (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.

ՊԱԼԱՏ

- (1. Սուլթան համամ .
- (2. Սուլթան Պէյազիւ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 .

ՍԿԻՏԱՐ

Չարչը Պօյաւ, թիւ 120 .

Կասաբեայ երաժիշտութիւն

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւզդուլի տունը:



ՐԵԻԵԼՔ ՕՐԱ-

ԹԵՐԹ ազգային, գրական եւ ֆաղափական: — Բաժանորդագրութիւն՝ տարեկան 4. Պուտոյ համար 80 դր. վեցամսեայ 45 դր. գաւառներու համար տարեկան 108 դր. վեցամսեայ 60 դր. և օտար երկիրներու համար տարեկան 35 ֆր. վեցամսեայ 20 ֆր. Զեռքէ վաճառում՝ Տաւր փարա: ԱՐԵԻԵԼՔ հրա լարակ կ'եղէ ամէն օր, կէս օրին, խընամեայ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԱՐԵԻԵԼՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներ

րով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ:

Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏ-ԿԵՐԱԶԱՐԴ ըլլալու հանգամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար: Մանօթ Դէմքեր և Ներքեմն ալ տեսարաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, տնտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական եւայլն, բաց ի գրական, բանասիրական գրուածքներէ, օրուան տեսութիւններէ եւայլն:

ԱՐԵԻԵԼՔի վերաբերեալ ամէն գրութիւն ու բաժանորդագին չպէտք է ուղղել Տէր և Տնօրէն Դարեգին էֆ. Պոյաճեանի հասցէին, Ղալաթիա, Մահմուտիէ Ճատտէսի, ուր հաստատուած են թերթին ապարանն ու խմբագրատունը:



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻԻ 38

ՇԱՐԱԹ

17 ՄԱՅԻՍ 1908

ՆՇԱՆԱԽՈՐ ԱՆՁԻՆՔ

“ԹԱՂԱԿԱՆԸ,,

ETUDE }

Մարդ՝ պարզ մահկանացու կը ծնի ու թաղական կ'ըլլայ:

Ամէն մարդ թաղեցի կ'ըլլայ, բայց թաղական ըլլալ ամէնուն չէ տրուած:

Մեծ պատուոյ մը տիրացած կ'ըլլայ այն թաղեցին՝ որուն մէկ քանի հարիւր քուէ յատկացնելով աթոռ կը հրամցունեն ու կ'ըլլայ թաղական:

Թաղականները ամէն բանի կը խառնուին, բայց չեն ուզեր որ մէկը իրենց գործին խառնուի:

Վաճառականը՝ թաղական կ'ըլլայ, սեղանաւորը, կոշկակարը, հացագործը, եազմաճին անխտիր թաղական կ'ըլլան:

Թաղականը կը խառնուի թաղին դպրոցին և եկեղեցիին վերաբերեալ գործերուն:

Թաղականները մասնաւոր քալուածք մը ունին, որ մէկ տեսնալուդ կը ճանչնաս զիրենք:

Թաղականները տեսակ մը գաւառացիներ են, որոնց խօսակցութիւնը, նիստ ու կացը բոլորովին տարբեր են հասարակ թաղեցիներէն:

Թաղականութիւնը տեսակ մը հիւանդութիւն է, որմէ վարակուողը դիւրաւ չի կըրնար բժշկուիլ:

Թաղականներուն մէջ ծոյլ մարդ բնաւ չիկայ, ամէնէն դանդաղն իսկ տասն անգամ բանկալէն պահարան, պահարանէն բանկալ կերթայ ու կուգայ շարունակ:

Թաղականին առաջին գործն է՝ կիրակի առտու անկողինէն ելնելուն պէս հագուել շքուիլ, ու հայելիին դէմ պիտի որորելէն ետքը՝ ուղղակի շունչը առնել եկեղեցիին խորհրդարանը և կամ բանկալը:

Թաղականին միակ փառքն է ժամկոչին կամ բանկալապետին յոտնկայս բարեւելը:

մանաւանդ երբ քանի մը տեսնողներ ալ գտնուին հոն :

— « Ժամկոչ ախպար, խահուէ մը ըսէ », այս է իր առաջին հրամանը :

Թաղականը իր դէմը ելլող ամէն մարդ ժամկոչ ախպար կը կարծէ :

Թաղականները ծայրայեղ գաղտնապահ պիտի նկատուէին՝ եթէ թուրքերանութեան և գաղտնապահութեան հոմանիշ բառեր եղած ըլլային :

Թաղականը անկուտի մեծատուն մըն է, որ խել մը ծառաներ կունենայ իր տրամադրութեան տակ ... եկեղեցիին դրամով :

Թաղականը այնպէս կը կարծէ թէ՝ առանց իր անդամակցութեան եկեղեցին՝ դպրոցը տակն ու վրայ պիտի ըլլայ :

Թաղականը դպրոց այցելած պահուն վարժապետը ու վարժուհին բարեւ կը բռնեն իր դէմ, և աշակերտներն ալ ոտքի կ'ելլան անպատճառ :

Մարդ միւսիւ ըլլայ թէ աղա, անպատճառ էֆէնտի ածականով կը պատուուի երբոր թաղական ըլլայ :

Թաղականը կիրակի օրերը ժամը աւաթուրքա Ցին Գին կը ճաշէ :

Թաղականը երբոր եկեղեցի գայ, ժամկոչը անոր ետեւէն առջեւէն կը պտըտի, իսկ երբոր թաղականին կինը եկեղեցի գայ, ժամկոչ ախպարը ամէնէն առաջ անոր կը տանի մինտէրը :

Թաղականին կնկանը տարուած մինտէրը ամէնէն նորը կ'ըլլայ :

Թաղականին կինն ալ իր խօսուածքով իր շարժուձեւով բնաւ տարբերութիւն չունի բուն իսկ թաղականէն, միայն թէ խորհրդարան չեն մոտներ, և այդ իսկ է պատճառը որ ցարդ չեն արժանացած թաղականուհի տիտղոսին :

Թաղականներուն մէջ չես կրնար գտնել մէկը որ լուրջ եղած չըլլայ, և այդ նորեկ լրջութիւնը չե՞մ տեսներ իրենց վրայ, հաւատացէ՛ք խնդալէն վրաս հոգի չի մնար :

Լրջութիւնը համազգեստ մըն է, զոր ամէն թաղական, իրեն վայլէ թէ ոչ, պարտի կրել իր վրայ անպատճառ :

Քանի մը տեսակ թաղական կայ. թաղական կայ որ հացին օխան քանի փարայ

պիտի աւելնան գիտէ, թաղական կայ որ սքօլէսին բիացայէն կը հասկնայ, թաղական կայ որ բամպակին մէկ բէնս վրայ դրած ըլլալէն տեղեկութիւն ունի, ահա այդ իսկ է պատճառը որ ատոնք երբոր իրարու մօտ գան՝ զիրար չեն հասկնար : Մինչ ասդիէն մին՝ հացին գնոյն տարապայման յաւելման վրայ կը գանգատի, ասդիէն միւսը 5 բէնս է կը պոռայ, խելքը բամպակին երթալով :

Շոգենաւի գամառաները, սրճարանները՝ թաղական խորհրդոյ մասնաճիւղերն են :

Թաղականները, աղջիկտես ելլող օրիորդներուն պէս՝ պատարագի ատեն կը կոճկուին կը կոկուին ու պնակ պտտցնելու կ'ելլան :

Թաղականը պնակ ի ձեռին պահարանին դուռնէն ժողովուրդին մէջ մտնելու պահուն իրեն այնպէս կուգայ որ ամէն մարդ աչքերն իրեն վրայ տնկած՝ կ'ըսեն « Կոմիտաս էֆէնտին թապախի ելաւ » :

Ըստ իր երեւակայութեան, ժողովուրդին հիացիկ ակնարկներուն տակ անպատու ուրախութեամբ, համեստունակ կերպարանքով մը սակայն, գրեթէ շառաղունելով պնակի կ'ելլայ, երբ քարոզիչը իր ծանուցումին մէջ զինքը յիշած ըլլայ :

— « Պատուարժան թաղական խորհրդոյ անդամներէն մեծապատիւ Կոմիտաս էֆէնտի Կառկառան անուն պնակ պիտի չըջագայեցունէ ձեր բարեպաշտութեան մէջ ... » :

Թաղականը ֆէսը գլխէն չի հանէր :

Տարին տասներկու ամիս եկեղեցի չեկողը, թաղականութեան օրով ամէնէն ջերմեռանդը կ'ըլլայ :

Թաղական կայ որ 3-4 լեզու գիտէ, թաղական կայ հայերէնն իսկ չէնք չնորհք չէ սովորած :

Թաղականներէն ժմանք քիչ չատ ուսմունք առած են, կան ալ որ ստորագրութեան մէջ իսկ տառասխալներ կ'ուրհեստան :

Թաղականը շոգենաւին մէջ անպատճառ մէվզը կը նստի :

Թաղականը սովորաբար ուրտէնկօթ կը հագնի :

Թաղականցուն մինչեւ որ թաղականական աթոռը բարձրանայ բաւական դրամ կը վատնէ գարեջուրի և օղիի համար :

Թաղականները պաշտօնի գլուխ անցնել-

Նուն պէս ամէնէն առաջ իրենք են որ զիրար « Էֆէնտի » կանուանեն, թէեւ յայտ թաղեց-
ւոց մէջմէկ թաղական աղաներ են անոնք
միշտ :

Թաղականը խելք մը ունի կը թոցունէ
գոնէ վասն ատենադպիրի և կամ վասն ա-
տենապետի ստորագրելու համար, եթէ ատե-
նապետ կամ ատենադպիր ըլլալու գերերկ-
րային փառքին չէ արժանացած :

Թաղականը ստորագրութիւնը դնելէն ետ-
քը քանի մ'անգամ ալ վրան կը նայի, մին-
չեւ որ կատարելապէս ըմբռնէ այդ առթիւ
զգացած գերագոյն հաճոյքը : Զոր կունենայ,
այն ալ սա է թէ ինչու սովորութիւն չէ ե-
ղած իր անունին քով « Էֆէնտի » ածականն
ալ դնելը :

Թաղականները թաղեցւոց ծառաներն են :
Թաղեցիք այդ կարգի ծառաներուն ամ-
սական վարձատրութիւն մը չեն սահմանած
դեռ :

Թաղականները որքան ալ անձնուէր աշ-
խատին՝ դարձեալ չեն կրնար գոհ ձգել իրենց
տէրերը, թաղեցիք չափազանց խստապահանջ
են իրենց թաղական-ծառաներու հանդէպ :

Թաղականը ժամկոյն լուսարարին միայն
կրնայ պուռալ կանչել, իսկ թաղեցին ամէն
ատեն և ամէն տեղ թաղականներուն երեսը
վար կառնեն, իբր իրենց անկարող ու տըլա-
մար ծառան :

Թաղականներուն համար չիկայ թաղական
մը՝ որ գրպանէն դրամ տուած չըլլայ, իսկ
թաղեցւոց համար չիկայ թաղական մը՝ որ
եկեղեցւոյ անտուկէն փարա գողցած չըլլայ :

Թաղականները կանթեղներու յատկացուած
խղին վրայ բէթթօլ կը լեցունեն, որպէս զի
ժամկոյնները ֆասուլեա բիեազի կամ սալաքա
չը չինեն :

Թաղականը՝ ժամկոյններուն, լուսարարին
յարգանքի պայմանադրական ձեւերէն այն
աստիճան կը շլանայ ու կը շլորի, որ տա-
կաւ կարեւորութիւն չի տալու կեւլայ Ու-
սումնական Խորհրդոյ և կամ Տնտեսական
Խորհրդոյ իր վրայ ունեցած գերիշխանու-
թեան :

Թաղականին համար կիրակի օրը իր փառ-
քի օրն է :

Թաղականութիւնը ձեռքէ ձեռք կը յա-

փըշտակուի հակառակ անթոշակ սպասարկու-
թիւն մը եղած ըլլալուն, հապա եթէ թոշա-
կաւոր սպասարկութիւն մը եղած ըլլար ան,
վախճանը ի՞նչ պիտի ըլլար արդեօք, Աստ-
ուած իմ :

Թաղականութիւնը քահանայութեան պէս
բան մըն է : Պարզ մարդը քահանայ ըլլալու
համար նախ դպիր կ'ըլլայ, յետոյ կիսասար-
կաւագ, անկէ ետքը Աւագ-սարկաւագ, վեր-
ջէն ալ քահանայ, այդպէս ալ պարզ մահ-
կանացու մը թաղական ըլլալու համար նախ
կրթական և կամ այլ օժանդակ մասնախումբի
մը անդամ կ'ըլլայ, ետքէն Աղքատախնայի
և կամ հոգաբարձութեան անդամ, և անկէ
ետքն ալ ... թաղական :

Գառնուկի նման հեղ մարդն իսկ գայլի
պէս կը կատղի երբ քահանայ կամ թաղա-
կան ըլլայ :

Եկեղեցիին մէջ թաղականին երեսը բնաւ
չի խնդար, ատոր համար է որ Ալփիար,
Երուանդ Թօլայեան և ամէն անոնք որոնք
զուարթերես են թաղական չեն կրնար ըլլալ
բնաւ, քանի որ, զանոնք ծեծելու ալ ըլլաս,
դարձեալ կը խնդան :

Թաղական մը ամէն պարագայի մէջ քիչ
չատ օգտակար կրնայ ըլլալ իր պատկանած
թաղին, ուստի երբ ի կենդանութեան եղող-
ներուն հանդէպ ցուրտ վերաբերում մը ցոյց
կուտանք, գոնէ մեռնողներուն հանդէպ
յարգական վերաբերում մը ունեցած ըլլալու
համար բերններնուս վար չի ձգենք սա աղօթքը-

« Վասն հոգւոց հանգուցելոց որք ճշմա-
« րիտ և ուղիղ թաղականութեամբ ի Բրիս-
« տոս ննջեցին, զՏէր աղաչեսցուք » :

Տէր ողորմես :

ՇԱԲԱՐԵՂԵԳ

ՇԱՏ ՆՊԱՍՏԱԽՈՐ

Հանգրագիսակի Տնօրէնութիւնը նկատելով
որ՝ իր Ազն. Ընթերցողներէն շատեր ներկայ
եղանակին գիւղերը կ'երթան, զանոնք թեր-
թէ չի զրկելու համար որոշած է ԵՌԱՄՍԵՍ
մասնաւոր բաժանորդագրութիւն մը բանալ
12 շրուշի փոխան, և թերթերը հասցնել օրը
օրին՝ ո՛ր արուարձանը որ կուզուի : Ասիկայ
պզտիկ գոհողութիւն մը և դիւրութիւն մը
չէ մեր կողմին, երբ նկատի առնէք թէ բոս-
թայի ծաղքը մենէ կը տրուի :

ԱԼԷՄ-ՏԱՂԻԻ ՆԵՐՇՆՉՈՒՄՆԵՐ

ՅՈՎԱԿԻՄԻ ՊԱՆԴՈԿԸ

ԳՐԶԻ ԽԱՂ-ՆԱՄԱԿ

Թուղք, գրիչ, մելան,
 ինձ գրգիռ կ'ըլլան
 որ գամ, այս անգամ,
 քու բարեացական
 միտքիդ ու խիղճիդ
 — հիւրընկալ խոհիք —
 մեզն, իբրեւ կենիք
 փիղի բնանի,
 իմ յանգաբանի
 հեռալից երկանց
 արդիւնէն — հնչուն գանձ —
 այլոց ի պապանձ
 մսխել աննախանձ:
 Կր ցանկամ ւրանց,
 ո՛վ վեհասիրս անձ
 որ, քաղցր ու բարի
 ինձ համար կարի
 հաւտ աչիք երկարի
 իմ դեռ սրկարի՝
 զբռնածքիս վերեւ +
 զի փափկասերեւ
 վարդ մ'եմ, ում արեւ
 դեռ նոր քալ բարեւ . . . :
 Ո՛ւՅ, այս ինչ անձրեւ
 ջրհեղեղ իբրեւ
 որ յորդ, յարասեւ,
 երկինքէն սեփ սեւ
 քափի հեւ ի հեւ . . . :
 Անտառին ետեւ
 հոս, Ալեմաղի,
 ա՛յնքան կասաղի
 է գուրճ՝ որ խաղի,
 խինդ ու ծիծաղի
 վայելիք համար
 գերազանց յարմար
 բարձրադիր, ժպտուն
 այս պանդոկասուն
 տեղն է հանգստեան,
 կոչուած, յաւիտեան,
 օրէլ Լեվէնտեան:

* * *

Երբ Սամուէլ երեց
 փութով ձեռներեց
 մեզ նրկարագրեց
 այն բազմահրապոյր,
 համակ գոյն ու բոյր
 պաւստի գիւղին
 ջուրն, օդն ու . . . օդին,
 եւ պաւստեց շիտակ

քե՛ր բանձրակուսակ
 քաւ ուտեռուն տակ
 խօլ խաղ ու կասակ
 ընելու տակ
 քոչնոց գումարտակ,
 դալլալով յսակ,
 անվերջ, անվասակ
 հոգւոյն ի հրճիւ
 երգելով ճիւ ճիւ,
 ռամկին, պրեկին՝
 ըզմալլուն, հեշին
 յոյգեր տան սրտին,
 — մոռցած էր, աւա՛ղ,
 ըսել քե՛ր նրաղ,
 դասարկ, անսրաղ
 ըստմոխն՝ ո՛ւր տեղ,
 անօրութեան դեղ,
 համեղ ու հիւրեղ
 լաւ կերակուրներ
 պի՛ս՝ արդեօք զտե՛ր:
 Մոռցած էր անի
 քե՛ր ո՛չ գեղանի՝
 այլ խիտ անուանի
 տե՛ր օթեանի,
 Յովակիմ աղան
 կազմ ունի սեղան
 ուր կը պրսպրդան
 ըստաններ բոլոր.
 Եւ շուրջն, անմոլոր,
 նիհար, գեր, կրլոր,
 երկտեղ, հաւ, ախլոր
 հիւրեր նորանոր
 կուգան ամեն օր
 վայելել անոր
 նաւերն՝ անխրտ
 համադամ, ընտիր:
 Մա՛րդ չըսեր. «կա՛նգ առ».
 անկուտ, անպատկառ
 բերաններ . . . տակառ,
 կուլ կուտան կանկառ
 խորիկ, վառեակ, ձուկ:
 Թանգ այլ վաղանցուկ
 պրտուղներէ գաս,
 մածունն հարազատ
 եւ կաթն ու կարագ
 կը սահին արագ
 անլոյս, անքրագ
 մեր խոր ու խաւար
 կոկորդներէն վար:
 Իր հիւրերն ամեն

քո՛ղ ուտեն, խրմեն,
 խնդան ու խաղան.
 Յովակիմ աղան
 հրճուի՛ իւրովի,
 այն ժպտուն աչուի
 յաղք ու կորովի
 — փառաց ծարաւի —
 մարդն որ, յիւաւի,
 յուզում գորովի
 տեսով մ'աննրման
 մեր տուրջ կուգայ ման,
 ձեռնին՝ մէկ աման
 ձիւքարուր՝ տօրան
 բաժնելով յրման
 չի տկար մեծման.
 «Առե՛ք, ա՛խ, աւա՛ն,
 «Կամա՛ն է, Կամա՛ն»:

* * *

Լոյս, օդ, կեանք՝ մաքուր,
 ո՛չ նամակ, ո՛չ յուր,
 սոխակ՝ դաւնամուր,
 զուռնայի ձայն՝ սո՛ւր.
 առատ կերակուր,
 մեծանաւաս հուր,
 ոչխար ի շամփուր,
 կարագ, կաթնապուր,
 անմահական ջուր,
 օդի անփրփուր,
 յեցո՛ւր ու յեցուր,
 հոգերէ քափուր,
 կե՛ր, ա՛րբ, Կա՛ն եկուր:
 Յորեկին՝ կանգուն,
 զիւրե՛ն՝ անուշ փուն,
 իսկ առաւօտուն
 մեր տան դէմ, ժպտուն,
 Եղաբեք տուտուն
 զրգուէ իր կատուն . . . :
 Սենեակ բռնողին՝
 մաքուր անկողին,
 գաւաթ՝ նորեկուկ,
 ո՛չ տաս վրովրուկ,
 ո՛չ մէկ հաս մրուկ . . . :
 — Յովակիմ աղան,
 եւ իր նոյս սեղան,
 Օրէլ Լեվէնտեան,
 աւխարհի յատեան
 կեցցե՛ն յաւիտեան . . . :

(Այգեկոյք)

Ա.Լ.ՓԱՍԼԱՆ

ԹԱԾԿԻՆԱԿԸ



Ծաղկի մը պէս բուրումնաւէտ, շերտփա-
գիի թեւերուն նման նուրբ և արփի չափ մեծ
պաթիսթի այդ կտորը՝ թաշկինակը՝ ան ալ
իր պատմութիւնը ունի ... ամէն տարաբաղդ
համայնքներուն հանգոյն: Նախատիպար կի-
նը Եւա՝ ապահովապէս Ալանսոնի տանթել-
ներով զարդարուն թաշկինակով մը չէր որ
կը սրբէր իր չրթները և կը զարմանամ թէ
ինչպէս՝ մարդերու այդ առաջինը և վերջինը
goujatներուն՝ Ազամ ներքեց ինքզինքին սի-
րահարիլ կնկան մը որ թաշկինակին պաշտո-
նը մատնեցուն կը յանձնէր:

Արդարեւ ատանկ անճաշակ պարոն մը,
դրախտի այդ տունփեռան, պէտք չէր աւելի
երկար վայելէր բոլոր երանութիւնները Ե-
ղեմին:

Մարդկութիւնը՝ թաշկինակի գիւտէն ա-
ռաջ, շատ մաքուր բան մը ըլլալու չէր եթէ
երբէք նախապատմական ժամանակներու մէջ
ալ քիթերը այնքան մօրուտ էին որքան այ-
սօր: Եւ իրաւունք ունէին երբեմնի հռով-
մէացի երիտասարդները որ ամուսնանալ մը-
տադրելուն պէս, փնտռելու կելէին այն-
պիսի աղջիկներ որ ամէնէն նուազ յորդա-
ռատ քիթերը ունէին, հոգ չէ թէ այդ քի-
թերը կոր ըլլային, տափակ և կամ
չորքած:

Երբեմն, աղջիկներու աշխարհին մէջ, չոր
քիթը այն դերը կը կատարէր՝ ինչ որ կը
կատարէ այսօր դրամօթիտը մեր մէջ: Ուրեմն
քիթ մը քիչ վաղէր այնքան շատ կը վազէին
ետեւէն: Ինչ երանելի ժամանակներ ...:

Հռովմայեցիք suderium անունով մկրտե-
ցին զայն երբ երես սրբելու յատուկ էր և
orarium երբ անով բերանին կը սրբէին.
բայց քիթ վրայ մտածող չիկար, որովհետեւ
անոնք ալ, մեր ոսկերիչներու շատերուն պէս,
աւելորդ կը համարէին այդպիսի գործածու-
թիւն մը հնարել, բաւ համարելով այն երկ-
նատուր, բնածին, աժան և հինալ չի գիտ-
ցող թաշկինակը զոր Աստուած զետեղած է
ամէն մարդու թրամատին և ցուցամատին
միաւորութեանը մէջ:

Բուն, ճշմարիտ, քիթի յատուկ թաշկինա-

կին պէտքը ասկէ ճիշտ հինգ հարիւր տարի
առաջ զգալի եղած է երբ Եւրոպոյ մէջ ա-
ռաջին անգամ ըլլալով քթախոտին գործա-
ծութիւնը սկսաւ:

Ձեր գիտցած և գործածած թաշկինակին
գիւտը կը պարտինք Յաճճօլէթօ անուն Իտա-
լացիի մը, որ առաջին երկոտասանեակը մէջ-
տեղ հանեց 1402ին:

Ինչ բարեշրջում կրեց սակայն անկէց
ի վեր լաթի այդ կտորը: Միտքերնիդ բերէք,
օրինակի համար, Շղթայակիր Աւետիք Պատ-
րիարքին կապոյտ, հաստ, պարտէզի մը չափ
մեծ թաշկինակը և այն նրբահիւս, հրաշալի,
բանաստեղծական տանթելի պատառը զոր
կը գործածէ Գլէօ տը Մէրօտ, մանաւանդ որ
այնքան սերտ յարաբերութիւններ ունի ...
Պրիւսելի հետ որ աշխարհիս ազնուագոյն
ժանեակները արտադրող քաղաքներէն մէկն
է Վալանսիէնէն և Ալանսոնէն անմիշտպէս
ետքը:

Քաղաքակրթութեան յառաջդիմութեան,
ճարտարագործութեան բարգաւաճման և ճա-
շակներու նրբացումին հետ թաշկինակն ալ
դադրեցաւ ըլլալէ այն գոհիլ լաթի կտորը
որ միմիայն քիթի գործածութեան յատուկ էր
և ստանձնեց դերեր որ մէկէ աւելի են:

Անցեալ դարերու տարեգրութեանց մէջ
թաշկինակի պատմութիւններ կան որ պար-
զապէս երազել կուտան մեզի: Իրենց թաշ-
կինակներուն սքանչելութեան համար նշա-
նաւոր եղած են Ֆրանսական պատմութեան
մէջ տը Շըվրէօզ դքսուհին և տիկին տը
Քասթիլօն, որուն համար կըսեն թէ՝ իր թաշ-
կինակներուն գոյները միշտ միազոյգ էին իր
ճնրակապերու գոյներուն հետ, որոնցմով դի-
մացինին զգացնել կուտար իր հոգեկան վի-
ճակը այդ տուփառէր կոմսուհին: Կապոյտ
կըլլային անոնք երբ տիկին տը Քասթիլօն
սիրոյ մը թեւարկելը կզգար սրտին մէջ, մո-
լոշագոյն՝ տխուր ժամերուն, կանանչ՝ յու-
սալից օրերուն, դեղին երբ նախանձը կը
ծակծկէր հոգին և կարմիր՝ ամէն ամիս:

Մեր զգայապաշտ կեանքին մէջ թաշկի-
նակին դերը ոչ նուազ նշանաւոր է: Սիրոյ
աշխարհին մէջ ինչ պիտանի և ինչ սիրուն
accessoire մըն է թաշկինակը:

Որքան հրապուրիչ, որքան անգիմադրելի

է կին մը որ չարածճի կերպով խաղալ գիտէ իր թաշկինակին հետ, երբ ատկեայ ղզլխի հոտեր կը բուրէ որ մեր մէջը տենչեր կարթընցնեն և զմեզ կը գինովցնեն հեշտալի մագնիսականութեամբ: Դարձեալ թաշկինակն է որ դառն բաժանումի մը միջոցին կը սրբէ սիրուած էակի մը աչքերը և հեռուէն կը բերէ քեզի՝ իր թիթեռնիկի ծածանումով, սիրականին վերջին մնաք-բարովը:

Թատերգութեանց մէջ ալ թաշկինակը իր վրայ խօսեցնել տուած է ստէպ: Թարթիւֆ իր խորամանկ ձեռքերով թաշկինակ մը կը նետէ Տօրինի դիւրամերձ կուրծքին վրայ և եակօ՝ նենգ մտածութեամբ մը թաշկինակ մը կը գետեղէ Օթէլլօյի վրիժառու ափին մէջ:

Որքան պաշտելի է աղջիկ մը որ déclaration մը միջոցին հաճոյքէն զգայազիրկ և ամօթխածութեան ճնշումին տակ, կը կրծէ իր թաշկինակին մէկ ծայրը և անոր ծալքերուն մէջ կը խեղդէ իր սրտին հառաչները: Վարպետորդի կինը՝ հաստատական հաւանութիւնը տալէ առաջ և հազար նազանքէ վերջ, թեւէն կախած ridiculeէն դուրս կը հանէ նրբամարմին թաշկինակը որուն mimoseի բուրումովը կը մարակէ կիրքերը:

Թաշկինակը յուշատետր մըն ալ է երբ մոռացկոտ մարդիկ կղթկապ մը կընեն անոր մէկ ծայրը խոստացուած բան մը չի մոռնալու համար: Շատերը մեր հայ կիներուն՝ իրենց գրպանի ստակը թաշկինակին մէկ ծայրը կը կապեն, որով կուենանք թաշկինակ-portemonnaie: Դողերու ձեռքին մէջ ձայնարգել մըն է թաշկինակը և մեր հսկա մարդերուն համար պայուսակ մը:

Աղջիկներ քիչ գտնուած պարահանդէսի մը մէջ թաշկինակը այն դերը կը կատարէ՝ ինչ որ կը կատարէ Շ գիրը Փրանսերէն լեզուին մէջ, պեխաւոր մարդ մը իգական կընէ:

Թաշկինակը մեր տեսակ մը դասակարգին համար, վզին և օձիքին միջեւ զետեղուած թումը մըն է քրտինքի ողողումին դէմ եախայից քօլան փրկելու համար:

Արցունքներու այդ ծծունը մեր նախնական պէտքերէն մէկն է, agenda մը մոռացկոտ մարդերու համար և աւելորդ ծախս մը անոնց համար որ կը պնդեն թէ երկու մատներէ աւելի պատուական թաշկինակ չիկայ:

Յ. ԱԼՓԻԱՐ

ՀԱՅ-ԼԱՅՅ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՇԻՆ

Քաղաքիս Հայ-Լայֆ դասակարգի աղջիկները՝ որոնց համար աներեւակայելի ամօթ մ'է Ազգ. վարժարանի սեմէն ներս մտնել, անցեալ օր հանդիսատես եղան տեսարանի մը որուն դերակատարն էր նոյն այդ հայ օրիորդներու կրթական փարոսը եղող մատամ Վելիդաս՝ համանուն վարժարանին դաստիարակուհին:

Ըստ որում Տէր և Տիկին Վելիդաս իրենց արժանիքն ու յաջողութիւնը գտած են մի միայն շլացնող սին փայլերուն մէջ, որոնց առջեւ կ'երկրպագէ Պրուսացի Հայ-Արիստոկրատ դասը, այս անգամ ալ կառքերով և լաքեռնաներով փափաքած են եղեր զուարթացնել Քարաման-քէօյի խաղաղաւէտ անդորրութիւնը, բայց զժաղաղաբար հոն՝ նախապէս գացած երկու քաղաքացի երիտասարդներ նշմարելով, և նկատելով որ անպատշաճ պիտի ըլլայ անոնց ներկայութեան կատարել իրենց ծրագրած արեւմտեան կայթատօնը՝ տիկինը իր ջղային կնկան մաղձոտ զայրոյթով կ'սկսի հայհուհներու և նախատականներու ճոխ մթերք մը պոռթկալ իր գարնանաբոյր և ճոխ զգեստներուն կամ սրբտին մէջէն: Բայց այդ երիտասարդներէն մէկը խոնարհաբար համարձակութիւնը կուենայ դաստիարակուհի տիկինին մօտենալով ըսել որ «Տիկին հարկ չկայ աշակերտուհիներուն հոս այդ հայհուհներու բանաստեղծութիւնը դաս տալ, քանի որ համբան բընութիւնը կ'հեւայ վսեմ բանաստեղծութեան մը տակ, ուրեմն թողուիք որ օրիորդները պահ մը բնութեան այս մեծ գիրքը կարդային»: Երանի՜ անոնց՝ որոնք այն իրիկունը տեսնելու բախտը ունեցան Հայ-Լայֆ ուսանողուհիները կրող ծաղկազարդ կառքերը:

ԼԵՒՈՆ ՓԱՓԱՋԵԱՆ

10 Մայիս 1908, Պրուսա



ՊԱՂԻՕՍՔԵՐ

ԱՌԻԹՈՎԸ ՕՐՈՒԱՆ ՏԱՔԵՐՈՒՆ

ՄԻ՝ ՍՊԱՆՆԵՐ . . .

ԱՅՈՒ ԿԵՐ . . .

Աշխարհիս ստեղծուելէն ի վեր էրիկ-մարդիկ զբաղած են թէ ի՛նչպէս պէտք է պտտուի կին մը որ կը մեղանչէ :

Բարեբաղդաբար կիները չեն խորհած երբէք թէ ի՛նչպէս պատժելու է մեղանչող այրը :

Օրէնսդիրները էրիկ-մարդիկը եղած են միշտ և բնականաբար ինքզինքնին դատապարտող օրէնք մը չէին կրնար հաստատել անոնք :

Այս հաշուով, էրիկ-մարդուն անհաւատարմութիւնը՝ ամուսնական տոմարակալութեան մէջ ռահու զեմի գլուխը անցած է ընդհանրապէս :

Բայց միշտ խնդիր եղած է թէ՛

— Ի՛նչ ընթացք պէտք է բռնել յանցաւոր կնոջ հանդէպ :

Յիսուս այս վերջինն ու զայն քարկոծելու զորող ամբոխին միջեւ կանգնած է՝ ըսելով .

— Թո՛ղ ձեր մէջէն անիկա որ մեղք մը չէ գործած, առաջին քարը նետէ այս կնոջ :

Յետոյ Ա. Տիմա Որդի իր թատերախաղերէն մէկուն մէջ պօռացած է .

— Սպաննէ՛ զայն :

Վերջերս Ֆրանսացի թատերագիր Պ. Պրիէտալ խաղ մը չինեց ուր կ'ըսէր .

— Մի սպաններ զայն :

Ու խնդիրը կը մնայ առկալս . — պէ՛տք է սպաննել թէ պէտք չէ սպաննել այն կինը, որ ամուսնին հանդէպ անհաւատարիմ կը գտնուի :

×

Կ'ուզէ՛ք գիտնալ թէ ի՛նչ կերպով կը վարուին վայրենիները այդ փափուկ պարագային :

Ո՛չ մենէ գէշ, ո՛չ ալ մենէ աղէկ կերպով, հաւատացէ՛ք :

Այլ բոլորովին տարբեր եղանակով մը :

Բարեբաղդութիւնը ունեցայ շահեկան տեղեկութիւններ ստանալու Սողոմոնի կղզիներուն բնակիչներուն մասին թէ ի՛նչպէս կը վարուին անոնք այդ տեսակ առթիւ մը : Այս կղզիներուն բնակիչները, որոնք իրենց կըղզիին՝ մեծ իմաստունին անունը տուած են, նոյն իմաստունը յատկանշող խորունկ արդարադատութեամբ կ'ընթանան այս պարագային ալ : Անոնք չափազանց խենդ պատուհասով մը կը պատժեն ամուսնական անհաւատարմութիւնները : Բայց կը փափաքին որ իրենց սահմանած պատիժը ուրիշներու համար ալ օգտաւէտ շահ մը ունենայ :

Սողոմոնի կղզիներուն բնակիչները իբար կը սիրեն ա՛յնչափ՝ որչափ պէտք չէ սիրել գուցէ :

Աւելի յստակ կերպով բացատրելու համար ըսածս, անոնք իբար կը սիրեն ձի՛շդ այն եղանակով՝ որով կը սիրենք մենք . . . րոգալիֆը կամ խորոված հաւը :

Մարդակեր են :

Ամէն ժողովուրդ իրեն յատուկ բարքերը ունի :

Ըստ Սողոմոնի կղզիներուն բնիկներուն, իրմէ խաբուած ամուսինը իրաւունքը ունի պատժելու յանցաւոր կինը, նոյնպէս իրաւունքը ունի նաեւ օգտուելու իր տուած պատիժէն :

Հետեւաբար, երկրին օրէնքները կ'արտօնեն զինք ո՛չ միայն սպաննելու իր կինը, այլ միանգամայն . . . ուտելու զայն :

Ըստ որում, Սողոմոնի կղզիներուն մէջ անհաւատարիմ կինը . . . կը սնուցանէ իր ամուսինը, զայն անպատուելէ ետքը :

Ակն ընդ աւան, և նոյն իսկ . . . ատամն ընդ ատաման :

Իր մարմինովը մեղանչած է կինը, հետեւաբար պէտք է անոր մարմինը . . . ուտել :

Միայն կը մնայ բաղձալ որ . . . միտը փափուկ ըլլայ :

Անշուշտ խաբուած ամուսինը այս վրէժ-
փռնդրական հացկերոյթին կը հրաւիրէ իր ազ-
գականները ու բարեկամները:

Որպէս զի այս հացկերոյթը միանգամայն
իր բարի օրինակ մը ծառայէ, հաւանօրէն
էրիկ-մարդիկը իրենց կիներն ալ մէկտեղ կը
բերեն:

Մերթ ընդ մերթ տրուած այս տեսակ
հացկերոյթները անշուշտ մէյմէկ պզտիկ դա-
սեր կրնան տալ այն կիներուն, որոնք փա-
փաքը կը զգան իրենց ամուսինն ... անկող-
նէն շեղելու:

Ու խորհիլ կուտան կիներուն.

— Եթէ ես իմ ամուսնիս պատիւը կտոր
կտոր ընեմ, ան ալ զիս ասանկ կտոր կտոր
կ'ընէ և ... կուտէ:

Ճաշէն վերջը, ինչպէս յայտնի է, մար-
դիկ ներողամիտ և թոյլ վիճակ մը կը ստա-
նան:

Հարկաւ Սողոմոնի կղզիներուն մէջ ալ
այսպէս կ'ըլլայ:

Պտուղին ատենը, հանգուցեալին յան-
ցանքները կը մոռցուին և միայն յատկու-
թիւնները կը յիշուին:

Հանգուցեալին յանցանքներն անգամ հը-
րաւիրեալներուն ու իր այրիին համար բա-
րեմասնութիւններ կը դառնան:

Ամէն պարագայի մէջ, կ'ըսեն՝ գինին խը-
մելով, համով կնիկ մըն էր:

Եւ որովհետեւ համով կին մըն էր, բոլոր
յանցանքները կը ներուին:

Գալով կնոջ մեղսակիցին, անոր է'ն մեծ
պատիժը կը կայանայ այս հացկերոյթին չմաս-
նակցելուն մէջ:

Կնոջ մը միս անգամ չեն զրկեր իր պաշ-
տելիին մարմինին խորովածէն:

×

Բազմաթիւ են այս Սողոմոնեան սովորու-
թիւնէն ծնունդ առած մանրագէտները:

Պատմեմ երկու հատը միայն, որովհետեւ
տեղս չափուած է:

Երիտասարդ Սողոմոնցի մը, որ կարգուե-
լու տարիքին հասած էր արդէն, կ'երէր կը
մրկէր դեռատի Սողոմոնցուհիի մը համար:
Շատ աղուոր էր աղջիկը: Խիստ վայելուչ
էր տղան, իրարու հանդիպած էին սալոննե-
րու մէջ, թատրոնը, պարահանդէսներուն,

գօնսէրներուն և մրցանակաբաշխութեան հան-
դէսներուն: Եւ ամէն տեղ տղուն նայուածք-
ները պերճաբարբառ յայտնած էին ըսելիքին:

Երիտասարդը նկատելով որ նայուածք-
ներու շեղուն բաւականաչափ ըրած էր իր
ընելիքը, գնաց գտնել ծնողքը իր պաշտե-
լիին և մարդու պէս խնդրեց ձեռքը իրենց
աղջկան:

Աղջկան ծնողքը պատասխանելէ առաջ
փափաքեցաւ աղջկան կարծիքը ստանալ մէյ
մը: Աղջիկը առաջին խօսքէն իսկ մերժեց:

— Չհաւնեցա՞ր, հարցուց մայրը:

— Խնդիրը այդ չէ', պատասխանեց չիկ-
նելով:

— Ուրեմն ինչո՞ւ կը մերժես կոր:

Դեռատի աղջիկը վարանեցաւ պահ մը,
բայց յետոյ պատասխանեց վերջնական կերպով:

— Ո՛չ, անկարելի' է: Արդեօք ետքէն
ի՞նչ պիտի ըլլայ: Երեւակայեցէ՛ք: Հիմակ-
ուրնէ իսկ աչքերովը զիս կուտէ կոր:

×

Ահա՛ միւս մանրավէպը:

Սողոմոնցի պարոն մը կարգուած Սողո-
մոնցուհիի մը կը դարպասէր երկար ատենէ
ի վեր:

Խեղճ կինը կրցածին չափ կը դիմադրէր
Սողոմոնցի Տօն Ժուստին հմայիչ խօսքերուն:

— Չէ', չէ', չըլլա՛ւ, կը կրկնէր միշտ,
պարագա տեղը մի' աշխատիք, մի' պնդէք,
չեմ կրնար ...:

— Ինչո՞ւ, հարցուց միւսը:

— Ամուսնական պարտականութիւններու
մէջ չեմ ուզեր թերախալ:

— Պարա՛յ խօսք, պատասխանեց միւսը
կատակելով, ասանկ բաներու մօտան անցած
է, ասոր համար էրիկդ քեզի չպիտի ուտէ՞
եա ...:

Դեռատի կինը սարսուռաց և յանկարծ ի-
րականութիւնը յիշելով՝

— Կաղաչեմ, կը ներէք, ըսաւ՝ մեկէն
ի մէկ պաղելով, կ'ուտէ', կ'ուտէ' ...:

×

Այս տողերէն վերջ անշուշտ հետաքրք-
րական պիտի ըլլար յիշել թէ՛ ի՞նչպէս կը
պատմենք մենք մեղանչող կիներ:

Դատաստանական խորհուրդին կը դիմենք:
Տասը տարի կ'երթանք կուգանք:
Լրագիրներու մէջ քեզազէ կ'ըլլանք:
Ամէն մարդ վրանիս կը խնդայ:
Բաւական բարայէ կ'ելլենք:
Վերջապէս կը յաջողինք համոզել թէ կը-
նիկնիս մեզի կը խաբէր կոր:

Որ ատեն Դատաս. խորհուրդը վերջապէս
կը լուծէ մեզ, և իբր պատիժ՝ կը անօրինէ որ
ամսական 7 ոսկի վճարենք մեր կնկան, որ
մեզի խաբած էր:

Յ. Պ. — Մի՛ դիտել Տաք Թէ՛ վերոյիշեալ գրա-
ծքս քիչ մը բաց եղաւ:
Օգտեր Տաք են սաստիկ:
Հիմա կ'ինքնը անգամ Թեւեռնին կը բա-
նան կոր փողոցը:
Կը ներուկ անշուշտ որ ես ալ քիչ
մը ... յօղուածս բանամ:

ԽՆՁ ԿՐՆԵՆ

Ժամը գիշերուան ութն է, քունս չի
տանիր:

Մուկները մարմինս ծածկուած մասե-
րուն արեւնը կը ծծեն, իսկ սիւվրաիները
(այս բառին հայերէնը չեմ գիտեր) մարմինս
բոլոր դուրսը մնացած անդամները կը կրս-
մըթտեն. — քունը մնացած աղջկներու պէս:

Լամպաս կը վառեմ և քիչ մը լոյսին կը
նայիմ:

— Ի՞նչ աղւոր բան է բանաստեղծ ըլլա-
լը, կը խորհիմ, եթէ վահրամ Թաթուլ մը
ըլլայի, լոյսին վրայ քերթուած մը կը գրէի,
լոյսը իբրեւ աւազան մը ներկայացնելով, ո-
րուն մէջը բանաստեղծը կը սիրէ լողալ: Կամ
թէ մուկները կը նմանցնէի սիրահարներու
առաջին համայններուն խաճատուածքին,
— նոր բաներ մը ըսած ըլլալու համար:

Բայց որովհետեւ ես ուրիշ բան մըն եմ,
ուրիշ տեսակ մը, humanum altum, որ ո՛չ
խմբագրապետ է, ո՛չ բանաստեղծ, ո՛չ ալ
տիրացու, այլ ... երգիծաբան (ի՞նչ աղւոր
արհեստ), գլուխս վերմակիս տակ առնելով՝
կը սկսիմ երկարօրէն խոկալ:

Բրտինքի մէջ եմ. — լոյսս կը վառի՛,
կը զգամ կոր ատիկա:

Ի՞նչ ընեմ որ ձանձրոյթս փարատի:

Դի՛ւտ մը, որ թէեւ գիտական աշխարհը
չի լուսաւորեր, բայց գոնէ ... զիս կը զու-
արճացնէ:

Ի՞նչ կ'ընեն հիմակ այս պահուս մեր ...
մեծ գրագէտները:

— Գուկին ալ Գեսթիսէր ա՛տ է, պիտի
գոչէք միաբերան:

Այո՛, հրամմեր է՛ք, c'est plus fort que
moi !

Իմ տկարութիւնս է ուրիշներուն գործե-
րովը զբաղելը:

Մեր մեծ գրագէտները ի՞նչ կ'ընեն այս
պահուս:

Օ՛հ, ի՞նչ պիտի ընեն ժամը ութին ...
բնականաբար կը քնանան, ոմանք կը խոկան,
ուրիշներ կը խուտան:

Արամ Անտոնեան պատկեր կը փնտռէ:

Մըմբեան՝ իր անկողնին մէջ՝ Սկիւտարցի
փայտօղիները կ'որսայ, Տէրոյնց պատուե-
լին վրայ խոկալով:

Ենովք Արմէն նալըններով կը պտըտի:

Յակոբ Տէր-Յակոբեան ... մուկները կը
կըթէ:

Ժիրայր Շիրակացի՝ ամուրիութեան ան-
պատեհութեանց վրայ կը մտածէ:

Նրբին բանաստեղծը Մեծարենց ... կը
խոկայ:

Ա. Այվազեան իր յիշատակներուն վրայ ...
կը քնանայ:

Զիֆթէ-Սարաֆ ոսկեղէն երազ մը կը տես-
նէ, ուր իր բոլոր գիրքերը argent comptant
կը ծախուին:

Կարապետ Ստեփանեան կը մենախօսէ:

— « Դու երէց-կին ես, ես տէրտէր եմ,
ո՛հ, գարուն է եկել, ո՛հ, ի՞նչ անուշ գա-
րուն է եկել »:

Պարոյր կը յօրանջէ:

Վահան Թօշիկեան անկողնին մէջ կը մտա-
ծէ թէ Պոլիս աւելի փարա կը վաստկէր թէ
իզմիր:

Զապէլ Զաքարեան՝ համայնքին մանկտին
դաստիարակելու վրայ կը խոկայ:

... Ու աւտու է:

Ա. քաղաղները կը խօսին ... երեսուն
երեք անգամ:

Արեւը կը ծագի, մարդիկ գործի կ'երթան:

Եւ այս տողերը գրողին միտքը կ'իյնայ որ
գիշերը ամբողջ չէ քնացեր, ուրիշներուն
գործերովը զբաղելով:

Ու այս պահուն կը սկսիմ քնանալ:

Դիշեր բարի՛:

ՄԱՅԻՍԻ ՃԼՎԼՈՒՔ

[Շար. Ճախորդ քիւհն եւ վերջ]

Կին և ալքօլ, չեմ գիտեր ինչ մը ունին իրենց մէջ, որ երբ չատ մօտդ գտնուին՝ բոլորովին մարդը կը փոխեն, գառնուկը առիւծի և մարդը օձի դարձնելու չափ։ Ուր որ կին կայ՝ հոն կը փութայ նաեւ ալքօլը, և ուր ալքօլը՝ քիչ մը անդին կինը երեւան կուգայ, և այսպէս երկու անբաժանները իրար գալով իրենց մէջ կը լուծեն, պաշիւր, դրամը և պաշտօնը։

Ահա ինչո՞ւ երբ կնքամայրը իր դրացնուհին Մանուկ աղային ուշադրութեանը յանձնեց, խեղճ մարդը որ պահ մը առաջ բարկութենէն կը փրփրէր՝ անմիջապէս փոխուեցաւ ու գոչեց՝ անանկ է նէ բերէք սա ըսախիս թէփսին ... :

Մէկ կողմէն միտը կը խորովուէր՝ միւս կողմէ նորածանօթ և հակասեռ երիտասարդները տակաւ կը տաքնային հակառակ սաղարդախիտ ծառերու շուքին, մինչ Մանուկ աղա կամաց կամաց կը խտխտացնէր երիտասարդ տարիքին յուշերը, որպէս զի քիչիկ մը օգտուի առիթէն։

— Ինծի նայէ կնքամար, կըսէ Մանուկ աղա պիսերը շտկելով, աս խառնախսին մինակ վար չերթար, սանկ շարուեցէք տէ, պարէ եղաւ ըլլալիք, մէյմէկ հատ ալ դուք խմեցէք, նա քօքօնային ալ տո՞ւր ...

Կնքամայրը տեսնելով թէ Տիկին Ուսկուկ անդին գրադած է, առիթէն օգտուելով խօսք կառնէ։

— Մանուկ աղա՛, բէք չափուիս խայնամիշ եղաք, չէ՛ ... ասխըտարին խայր չեմ, չիւնքիւ Ուսկուհին գիտե՛ս եա՛ թէփէ կէօղ է, հովի պէս մը ֆառդին երթալու ըլլա՛յնէ, իլիկներս ճուր կը կտրի ...

— Տուր պագալը՛մ, ի՞նչ ըսի քի, տահա աչկին մէջը ինչ ըռէնկ ըլլալը պիլէ չի տեսայ ... հէլէ կայնէ, սա չիչէն տէվիքմիշ ընենք տէ, անկէ ետքի լախըռտը է ըսածը ...

— Զիտեմ ալթըխ, տիխաթլը գործ տես, մաղը չի ծակես ...

— Անմատա մաղ հա՛ ... ատոր թամիրի տեղ չէ մնացէ՛ր քի ... նէ իսէ հայտէ նայինք, ամա՛ խելքս միտքս սա ճահիլին վրայ մնաց, հոռմին կնիկը լողէկ ամա, ատ միւսին հետ չի բերէիր նէ չէքէր պան կըլլար ...

— Բէք ըռաբութալը տղայ է Մանուկ աղա, ի՞նչ կըսես կոր ... դպրատունէն ելած, թէրպիլէի ...

— Աս տաքուն բէք թէրպիլէն չի բընտըռուիր, ինծի կուգայ քի ճըլիս հաւկիթով թէրպիլէի է ...

— Տեսա՛ր եա, դէմդ ինտո՛ր մարդաւարի խօրաթաներ ըրաւ ...

— Իշտէ ես ալ ադ խամ բօլիթիքան չեմ կընար կոր սինտիրմիշ ըներ, փատի պէս սիրտիս վրայ կեցեր է ... :

Յոյնին կինը իրենց կողմը կուգայ։

— Ասկ օլտուն, եալինիդ իցիօրսընդ, էլա բանայիամու, օլտուգծա պէնտէ իցէրիմ ... ըսելով՝ կը նստի խոտերուն վրայ բէշը վեր առած ...

— Քօքօնա Ասբասիա նէմ ալըրսըն, նա շու իսկէրմիտէ օթուր, կըսէ կնքամայրը ...

— Զարար չունի, ան գիտնալով նստեցաւ, մայիսին մութլախ ատանկ կը նստին անոնք, ալտըրմիշ մընէր ...

— Էղնիասու քալէ՛, մայօս ինէ, տէն բիրազի, զարարի եօ՛գ ...

— Հայտէ պագալը՛մ քօքօնա, պիր թօքա եաբալըմ ... կըսէ Մանուկ աղան, աչքին պոչովը պուզին տակի չապիքին քառօթանթէները դիտելով ...

Ու երբ երկուքը երեքը մէկ օդիի գաւաթները իրար կը զարնէին, տիկին Ուսկուկ վրայ կը հասնի,

— Օ՛խ ... իշտէ պու, Մանուկ աղա՛, քեզ պաղ ճո՛ւրը խօթեցին քի խըսըդ ինչաւ ... հէ՛ ... տահա թէզ չէ՛ ...

— Եկուր քա, խըսխանձ չուն, դուն ալ մէկ հատ մը նետէ, ես ծարերը թող տուի զաթը ...

— Դուն ծարերը թող տուիր նէ, ես չորս ճօթը մէկ բերելուն եօլը գիտեմ ... Եէք օր չէնէ թիւթէր մարսըս կըյրէր էիք առջի պերան, հիմա ...

— Կուզես նէ ադ պօծօզդ չիֆթ պոնէ, դուն ալ մինչօք քի իս խաթվէ խաթ մաս-րուֆը խօթեցիր նէ չիֆթէ թէլի խաղացիր դէմս, ֆախաթ էքմէքէի քիւֆէի պէս իքի թառաֆը ուզածդ բերելուս կիպի, ճէնէգիդ ֆիստանին պէս դառցար ... Ըսելով՝ Մանուկ աղան կնքամօրը եղբայրը քովը կը կանչէ, որպէս զի միասին օղիի ընկերանայ, և չի մոռնանք ըսելու որ՝ ան ալ լայլելիւր սոյնն խուլ էր:

— Կէլ պագալըմ գառուաչ, գատըն գըսմը պիզէ եէթիչէմէզ, տօլտուր տա աթը վէր ...

— Ամա պէն տէտիմ քի օրասը թէփէ տիր ըրւզկեարը օլուր, իւզէրինիզտէն գալըն պիր շէյ ալըն տէյի ... Կըսէ Մանկասար աղա, աչքերը բանալով:

— Ծօ՛ եօգ ախպար, օ տէյիլ տէտիյիմ: սանքի իչ տէյօրըմ ...

— Իչ տօնըմ ... Ինչ կըսէ քա Բուբուլ, կըսէ կնոջը ...

— Խըմէ մէկ հատ մը կըսէ կոր Մանուկ աղան ...

— Հա՛ ... մէռսի, իչէրիմ եա՛ ... մուհապէթէ Մանուկ աղա ...

— Մուհապէթին արթըն, օ տէյիլ ամա՛, ըռագըմ նասըլ տըր ...

— Սուս օլ, պէնիմ տէ վար ըտը, սուեսա գօյտում թըռնագլատըմ ...

— Ինծի նայէ կնքամար, ըռախիին տիպը մտիկ չըլուիր կոր ... Կըսէ Մանուկ աղան, հապըռէ ճնկելով:

— Նասըր չըսէր կոր Մանկասար աղա, ըռագը նասըլ տըր ... Կըսէ կոր ...

— Հա՛ ... էլմաս, էլմաս, զաթը սէն մէռագըլը սըն ...

— Քա ան չէ՛ ամա, գիտես քի հետեր-նիդ միւսիւ մը կար, պաղնիքի պուռնուզ-եան ըսիք, Թացբէշտիմալեան, ինչ, ո՛ւր է ան չեմ տեսնար կոր ...

— Աղջիկներուն հետ ճիվճիվ մատնոցիկ կը խաղայ կոր Մանուկ աղա, մէռաք ընե-լու պան չէ, կըսէ կնքամարը՝ որ միշտ բէ-չերովը ծածկել կը ջանար ամէն ինչ:

— Չէ՛, հոգ չէ՛ ամա, կը վախնամ քի մատնոցէն պըխմիչ կըլլան տէ՛ սատէ ճիվ-ճիվին կը մնայ ...

— Աման դուն ալ Մանուկ աղա՛, տահա նէլէր ...

— Պէնտէ կէօրտիւմ ամա՛, այըպ օլուր տէյի ալմատըմ, եօգսա օգկասը տէօրթ գու-ռուչա գատար վէրիյօրլար ըտը, հէմտէ ֆը-ռէնկ տէյիլ ... Խօսք կառնէ Մանկասար աղան, գիտէ չիտէ մէջ մտնալով:

— Սա հէրիֆին ըսէ չէնեէն կղպէ, պէթ խօրաթա մը պիտի ընեմ հիմա, կնքամար, աղբարդ է ամա, իքինճի չիչէնէն ետքը մտիկ չըլուիր կոր ...:

Մինչ օղիին շուրջ այսպէս թէ այնպէս կը խօսակցէին, անդին միւսիւ Թացբէշտիմալ-եան հաւերու մէջ ձգուած աքլորի պէս թե-ւերը զարնելով ժամանակ կանցընէր, առ ո-չինչ գրելով ներկաները, նոյն իսկ ծնողքը այդ տատրակներուն:

— Ախ օրիորդ, ձեր երկուքէն մէկուն պիտի տամ սիրտս, որ մինչեւ հիմա գիտէի թէ մէկունը չպիտի ըլլար, այս որչափ քա-չողական զօրութիւն մը ունիք ...

— Մեղայ ըսէ, զահէր ես սիւլիւկ եմ ... ատ ինչ խօսք էր քի պէրնէդ փախաւ, չօգ չէ՛յ ...

— Որչափ դժուար է գիտնաք, երիտա-սարգի մը համար զգալ և չի յաջողիլ, որ-պէս զի դէմինն ալ ազգուի և ան ալ հրահրէ իր թագուն զգացումները ...

— Ես քեզի բան մը ըսեմ ծօ՛, կը հաս-կընամ կոր քի սիրեմ սիրեսի բաներ մը ըսել կուզես կո՛ր ամա, անխըտար խօյի կըսես կոր քի, քիչ մը հետդ պիտի տաքնամ նէ ալ, պուզ կը կըյրիմ կոր, կըսէ մեծ աղջիկը:

— Ինծի նայէ Սիրարբի, դուն կուզես նէ քաշուէ, կըսէ պղտիկ քոյրը ականջին, ես գիտես եա քէնէ երկու տարի էվէլ դըպ-րոց գացի, ես աս տղուն եախան չեմ ձգէր:

— Եաղմա չիգա՛յ ... սու քիւչիւլին սէօզ պէօյիւլին, զաթը անոր աչկը ինծի է, կուզես նէ հարցունենք ...

— Աս ո՛վ ըռաստ գաս նե՛ ճաշկողտե՛ս պիտի ... աս ալ ինծի ձգէ, տողրամածիին թխիկը մի դառցունէր կէսէ ...

— Ճաթիս ալ պատուիս ալ իմինը պիտի ըլլայ, տահա՛ ...

— Իշալլահ քիթիդ հոտը կառնէ տէ կը պաղի, հա՛, իշտէ ըսեմ ...

— Հիմա միսերըդ կոլորեմ հա ...

Նոյն պահուն միւսիւ թացբէշտիմալեան, որ երկու քող զաղտնի խօսակցելնին տեսնելով ետ էր քաշուէր, խօսք կառնէ,

— Որչափ երջանիկ պիտի ըլլայի օրիորդ, երբ ձեր մէկ նայուածքը համոզէր զիս թէ իրօք դուք ալ փոքր ինչ սէր կը տածէք վրաս ... , ա՛հ, որչափ ...

— Ճանճճ, ատ ատանկ պիրտէն պիրէ կըլլայ մի ... կայնէ նայինք քիչ մը վախիթ ասնի, իրար հասկնանք, աս դուն կուգես կոր քի պիր կէօրիւշ պիր պարը իրար սիրենք ...

— Առաջին սէրը, առաջին զգացումը էն իրականը և էն հիմնականը կըլլայ օրիորդ, դուք փորձառութիւն չունիք, բայց ես շատ մօտէն գիտեմ, և արդէն փափաքս ալ այդ է, չեմ գիտեր դուք ինչպէ՛ս կը խորհիք ...

— Զաթը սէվտա ըսածդ ատանկ կոտորտուելու չի գար, գործին մէջը քօլիթիքօղու թիւն մտնալուն կիպի անոր տիպը պօշ կըլլայ վիրա ...

— Զեր կաթնաթոյր թաթիկներով մարկուրի մը փրցուցէք օրիորդ և փորձենք մեր բաղբը, կարգանք իրարու սիրտ և այն ատեն նոյն իսկ բնութիւնը պիտի գայ հաստատել թէ խօսքերս կեղծ չեն և սէրս ալ ամուր ...

Օրիորդը պատասխանելու ատեն չունենար, յանկարծ մայրը որ նոյն ատեն ճաշի պատրաստութիւններ կը տեսնար՝ կը ձայնէ,

— Աղջիկնե՛ր ... Թեւերս փրթաւ ալթըն, եկէք կտորճիկ մը եարտըմ ըրէք ...

— Եկայ տուտու եկայ, կըսէ ու քիչ վերջը երկու քոյր իրենց մօրկանը օգնելու կը փութան:

— Նասըլ է քա Սրբուհի՛ ... ծառքի գալիք բան մըն է պանէ ...

— Աման տուտու, երկու սահաթ է սիրտ փոր կը հատցունէ կոր, ես ըսես նէ հիչ բան մը չեմ հասկնար կոր ...

— Էյ դուն հազ չըրիր նէ պղտիկին ձգէ, պէլքի անոր գործին կուգայ, իմ ըսելս ալ ան է քի, պօշը չի հանենք սա լօխման ...

— Անոր հետ չէ բէք, աշկը իս խածաւ ...

— Էյ տաքցա՛ք պարէ ... չէնէ մի պօշ խօրաթայով վախիթ անցուցիք, սէրսէմ էս քա սէրսէմ ...

— Սէրսէմ չեմ ամա, բէք մեզի կէօրէցու բան չէ տուտու, բէք խօյի կը խօրաթէ կոր, հէմէն կրնամ ըսէր քի, բռօթօսօռի խըտար պան գիտէ կոր ...

— Քա մենք ան մեզի ուշտուրմիշ կընենք, հէրիք է քի մէյմը սիրտը փակի, անկէ անդին մի մտմտար, մէյ մըն ալ, կայնէ նայիմ ինչ պիտի ըսէի ... հա՛, հարդը երկու հատ էվէլ խմած է, տիխաթ ըրէ չելլայ պաղ պան մը ընէ տղուն ...

— Ես սուֆուային տիպը քովս կառնեմ տուտու, անկաճնիվար ալ կըսեմ քի քիչ մը խուլլու է ամա չենք սէպէր տէյի ...

— Աղէկ ամա բէք քովը մի մտնար ... գիտեմ ես ... Ելլայ հոտը առնէ նէ ...

— Ես ատ մտմտացեր եմ, ուռուֆին չի չէն քովս է ... :

Մինչ այս մինչ այն՝ վերջապէս սեղանը կը պատրաստուի, կերակուրները կը հասնին և անուշ ձայնը մէջտեղ կելլայ «հրամանցէք» :

— Կէլ քա քօքօնա, սէնին լիէն պիր էօղէնկիլիք եարալըմ ... կըսէ Մանուկ աղան, աշքերը կաս կարմիր:

— Զէնկինլիք եարալըմ ... տէն գալթալավա քալէ թի թէլի նաբի ...

— Սանքի տէյօր քի, սէնին լիէն սօն գատէք իչէլիմ տէյի, կը թարգմանէ կաթնապուրուհի կնքամարը, որ ուտելիք արդար հացը հէլալ ընել տալու համար Մանուկ աղան Յոյնին կնոջը հետ եփելու կաշխատէր... (ինչեր կան աշխարհիս մէջ Աստուած իմ, որ ձեզի սուտ կուգայ):

— Քալէ իմաութօն էլվէրիր, քալէ տէն պօռօ նա քալտիրաթօ՛ ...

— Հայտէ ճանըմ սէն գալտըրըրօրն, քօճանըն սաղլըղընտա քիմ պիլիր քաչ չիչէ ասբէքսի եարար ըտըն ...

— Էյ հայտեցէք ճանըմ, խուզին կը պաղի կոր կը պօռայ խեղճ կինը, որ նոյն օրը խոհարարուհի էր եղեր փոխանակ ղըօսնելու:

Քիչ վերջը բոլորը մէկ նաթիւռէլ սեղանին՝ այսինքն գետինը փռուած ծածկոցին շուրջ կը բոլորուին, մինչ միւսիւ Թացքէշտիմալեան կը վարանի պաղտաշ նստելու, բանթալօնին խրուման չաւրելու համար:

— Ինծի նայէ միւսիւ, զարար չունի, հայտէ, հոս ասանկ կը վերցունէ, բաշաներըդ վեր քաշէ տէ տիտիկ ըրէ օղլում ...

— Բնականաբար այդպէս ընել ի մտաւ ածած եմ, բայց ...

— Տահա աղէկ եմ, կոկող ընես նէ խոլայ կածես ...

— Գիտնալու էք որ այդ բողիսիօնին մէջ ճաշելը որչափ հակառակ է մարդուս ֆիզիքականին ... և թէ ...

— Հայտէ նայինք դպրոցը չենք, գիրք ալ չենք շիներ կոր, փորը անօթի ըլլողը կուտէ պապամ, նստուկ կուտէ կայնուկ կուտէ, նաղ ընողն ալ ետքէն ճիվէրս թող ուտէ ...

— Մանուկ աղա, վախճամ չատ փախաւ, կըսէ քովէն կինը, և ականջն ի վար կաւելցընէ ... ըրիւր չըրիւր տա բօստալը քովդ առիւր նստեցար եա, կայնէ դուն, հէլպէթ գիշերը քեզ օտան կը կոխեմ ...

— Տուվա ըրէ քի կիրկս չեմ առէր, չիշէ Էւշ ... գառը, խելքդ տուն բեր ...

— Աստուած քէսէիդ պէշ պէրէքէթ տա Մանուկ աղաս ըսելով՝ կնքամարը կսկսի կատուններու պէս մուտալով լզուըռտուիլ:

— Նազիսիս Մանուկ աղա, նա խառիս թա քօռիցաքիսսու ...

— Նասու ... կը պողայ Մանուկ աղա, և կսկսի պիտերը ուրել:

— Կը չորցունեմ հա ծառքդ, եղաւ եղաւ տէ գործը ատ քէռթէնեմն ալ հասաւ... դուն ասանկ խոյ չունէիր նէ, կըսէ տիկին Ուսկուկ քոյն ի վեր:

— Խաչահանգիստի ճուր չէր խմածս, ըռախի է ըռախի ... ծիները պիւէ չայիրը ելլան նէ քիշնէմիշ կընեն, մենք ատոնց խտամր ալ քէֆ չընենք ...

Յանկարծ միւսիւ Թացքէշտիմալեան ոտքի ելլալով ջուրին գաւաթը ձեռք կառնէ և երկուք մը հազալէ վերջ կը պոռթկայ:

Գերայարգապատուազունազեղ հանդիսականք:

— Մօ պո՛ւ նէ ... սանա՛ նէ՛ օլտու, կըսէ Մանուկ աղան ձեռքը ճակտին դնելով և արեւին նայելու պէս միւսին դիտելով:

— Սո՛ւս ... արեւը սիրեմ խուշին, ուտելուն կիպի ճէօշմիւշ եղաւ, ուստու կըսէ կոր ...

— Նասըլ ուշխուռ քա՛, քիմ տիյնէյէ՛ճէք ... վաղ եկուր պէ՛ հէրիֆ ...

— Բնութեան դալարագեղ ծոցին մէջ՝ ուր ամառը կը ծնի խանձարուրուած պէսպէս և գունագեղ կանանչով մը, բնական զգացում մը, գեղեցկին ճաշակը և վսեմին դաղափաւրականը տուն կուտայ ինձ թոթով լեզուս արձակել իր վանդակէն երգելու համար սէրը սրտին: Արդ ...

— Աւրուեցաւ ինծի կուգայ քի, կտոր մը մօխիւր ճուր խմցնէիք կըսէ խուլ Մանկասար աղան, որ բան մը չէր լսէր բացի շարժուածներէն:

— Կայնէ ճանրմ սո՛ւս ... կըսէ կինը մատը բերնին դնելով:

— Արդ սիրելիք իմ, ի տես այս գեղաւորուարճ մարգագետինն, ի տես հովին որ սաղարդախիտ կաղնիներուն մատչի ի համբոյր, ի տես վերջապէս այս սեղանը պսակող անմահ հրեշտակային գեղեցկութեանց յանձին օրիորդներուն, որոնք...

— Մօ՛ պա՛պանըն ... ան ի՛նչ խալթ կերա՛ր, ծօ՛ ատ բնաստեղցընել կըսեն կոր ի՛նչ խառնախսի կըսեն կոր՝ ա՛տ է գիտնականութիւնդ, ասանկ էլ ալէմին աղջիկները օթթան դնել տէ վրանին սուլու սուլու պաներ ըսել է, հա՛ ... կըսէ Մանուկ աղա, որուն գլխէն շողի դուրս կուգար բարկութենէն:

— Քա ճանըմ, ծունը դիտուս, ի՛նչ կըլանք կոր, քա ի՛նչ ըսաւ քի ֆառդին չեմ, կըսէ տիկին Ուսկուկ, տեսնելով թէ տաք ապուրին մէջ պաղ ջուր մտաւ:

— Ի՛նչ պիտի ըսէ, տահա՛ ինչ պիտի ըսէ քա ...

Նոյն պահուն խուլը խօսք կառնէ,

— Խըռսլանմա Մանուկ աղա, եաղլը բառչա խթէրսէն նա թէփսիտէ վար, քիմ եէյէճէք ...

— Սուս ըրէ կնքամար տուիկայ, հիմա աս քէռթէն ... կըսէ տիկին Ուսկուկ, որուն

քիթին երկու կողմերը քրտինքի կաթիլներ շինուած էին դող ելլալէն:

— Ինծի նայէ հայրիկ, տղուն վրայ աղտար երկրիւիւ ընելու հախ չունիս, իրաւցունէ ի՞նչ ըսաւ...

— Քալէ էլա բանայիամու, օ թէօս նա ֆիլաքսի, թի՛ էբաթէ, թի՛ էլէյէ... Իմառ-թօն բանայիամու, ըսելով՝ Հեղէնուէին կըսկըսի խաչակնքել:

— Բաբէ՛ ... ո՛ր դժողք, ո՛ր սանդարամէտ, ո՛ր քէհէն ... բացէք ձեր ծոցը, բացէք ձեր դռները, թող գերեզմանս ըլլայ վայրն ուր կը գտնուիմ ... կըսէ միւսիւ Թացբէշտիմալեան, և նուազածի ձեւ մը առնելով՝ կիյնայ խոտերուն վրայ:

— Սատկիս իշալլահ տէ աղատինք ծառքէդ, ըռախի սիւնկէրի հէրիֆ ... աճապ ո՛ր սահաթը պիտի ըլլայ քի Պատրիարքարանին դուռը ծառք պիտի առնեմ տէ, չիֆթ երթամ թէք պիտի դառնամ, կըսէ ու սոթ-թուած երկու թեւերը պարզած երբ ամուսնոյն վրայ յարձակիլ կուզէ, միշտ նկատի առնելով աղջկանը սէրը Թացբէշտիմալին հետ ջուրը իյնալը, յանկարծ քօքօնան ոտքի կելլայ և կը փրփրի ...

— Անօյիթէ ... եաթի՛ թէլիս նա տուիս թօ Մանուկ աղան, եաթի՛ ... վոսմա՛ ... կըսէ տիկին Ուսկուկին, Մանուկ աղային բան ըսելուն համար սրտնեղած:

— Քա՛, կայնէ նայիմ, ա՛ս ով ձգնեց քի իմ եռսուն տարուան էրիկիս Թառաֆ կելլայ կոր ... քա հոտա՛ծ ... դուն որի՛ն էրկանը տէր կելլաս կոր ...

Եւ հա՛ա գիրկընդխառնումը կսկսի: Չեմ գիտեր թէ աւելորդ չպիտի ըլլար նկարագրել կանացի կզուրտութիւնը, Մանուկ աղային՝ դատեմ ըսելով քօքօնային հետ կլտորմայիս ըլլալին, և որ աւելին է՝ միւսիւ Թացբէշտիմալեանին առիթէն օգտուելով՝ ֆիլոթէլը այն պահուն՝ երբ Օր. Սըբուհի օ սը ֆօյօնեով չփել կուզէր ... կեղծ մարդին կուրծքը:

Վերջին ժամ. — Նոյն գիշերը միւսիւ Թացբէշտիմալեանը Մանուկ աղային քիւմէսէն դուրս են քաշէր:

Նոյն. — Եւ Մանուկ աղան՝ քօքօնա Ասրասիային բէշերուն տակէն:

ՄԻՐԱՀԱՆ ՕՐԻՈՐԴԸ

ՌԱՄԿՈՐԷՆ

Դուն իմ սեկսայես կը մեռնիս եղեր, Բայց ումէս մ'ըներ, ինէ չըկայ խեր. Ես ալ ուրիշին վուրդուն եմ, խաչո՛ր, Տես անոր համար ինչեր կըլլամ կոր:

Միւսիւ Զա՛րեհը, կը ճանցնաս պէիմ, Դրող կարգացող, հաթիմ ու պիթիմ, Մագերը խըվըռ, ինքը կըսկըրոր, Տես անոր համար ինչեր կըլլամ կոր:

Ան սեսած օրս սիւսըս կըրն ըրաւ, Սանկ ցերսիդիես ա՛խ մըն է փրթաւ, Խելքս քըռցուցի չեմ գիտեր ինչոր, Ախ անոր համար ինչեր կըլլամ կոր:

Առսունները միշտ կարքընամ սերսեմ, Իրիկունն անոր գալուն կըսպասեմ, Բուսրա, բուսլէք, սգուիլ ամէն օր, Տես անոր համար ինչեր կըլլամ կոր:

Աչիքն խոռ չ'երեւամ կ'ըսեմ կոր մեքես, Զերէ բիացան շաւ կայ շաներես, Եսքը խըվըրմիտ կընեն մեքօ զօռ, Տես անոր համար ինչեր կըլլամ կոր:

Մոմ մը վառեցի, Ամենափրկչին, Ծունկի չոքեցայ, պատկերին առջին, Ա՛խ Ասունած քսի, — խըսմէք մը աղւոր, Ես անոր համար ինչեր կըլլամ կոր:

Նաթըլ զուրցեմ էի հալըս հասկընաս, Ալ ուժ ու կորով չի մնաց վրաս, Աս սեկսա ալ չէ՛, տես մըն է խոռ, Ախ անոր համար ինչեր կըլլամ կոր:

Ասոնց ամենքը խրոսէս գրեցի, Քի մեհամէք ընէ մեղքընայ ինծի, Դուն ալ զուրուցէ ա՛խ միւսիւ Դիրգոր, Թէ անոր համար ինչեր կըլլամ կոր:

ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍԻՆ ՇՈՒՐՋԸ

Ա.Ո. «ՈՒՐԻՇ ՀԱՆԴԻՍԱԿԱՆ ՄԸ»

Տղաս պիտի չըսեմ քեզի, որովհետեւ երբեք պիտի չփափաքէի գձուձ բնազդնե-
րդ եւ փողոցային գաղափարներդ կրող տը-
ղայ մ'ունենալ: Որչափ ալ կը հայոյեաւ,
կը հասկնամ, իբրեւ «բոյնէն ինկած թռչ-
նակ» տարբեր բան մը չէիր կրնար ըլլալ:
Բայց ուրկէ՞ ուր փետուրներդ տարտղնցիր
այս էջերուն մէջ: Դուն ո՞վ, կորուսեալ
թռչնակ, որ կտուցդ կ'երկարես քու ման-
րիկ թեւերուդ սահմանէն շատ բարձր խն-
դրոյ մը, երբ տակաւին նոր թռթովել ըս-
կըսած ես, եւ առաջին կափկափումներդ
իսկ հայոյանք են: Մեղք ես, ինքզինքիդ
կ'ընես: Եթէ թռչունի կը նմանցնեմ քեզի,
այնչափ ցածէն բարձրը դիտելուդ համար,
դարձեալ պատիւ է: Եթէ նապաստակի նը-
մանցնեմ քեզի, այսպիսի լուրջ խնդրոյ մը
միջամտելու յիմարական ոստումիդ համար,
դարձեալ պատիւ է: Ինչի՞ նմանցնեմ: Աղէկ
քֆրել գիտես, ստել գիտես, տգէտ ես, եւ
քեզի պէս տղու մը դէմը կենալ՝ գանելիք
կուգայ մարդուն, այնչափ ազտոտեր ես կը-
տուցըդ ու փետուրներդ: Բայց կորուսեալ
թռչնիկ, աղէկ մտիկ ըրէ յորդորիս, գնա՛
խելօքիկ դարձիր բունիկդ, կ'ելլաս փետուր-
ներդ ալ վրայ կուտաս, մեղք ես, կը նե-
րեմ քու տղու միամտութեանդ, հայոյանք-
ներուդ, խելքիդ չհասած գործին միջամը-
տելու փորձութեանդ, եւ մանաւանդ՝ թեր-
խաշ կտուցիդ հարուածներուն՝ իմ եւ ուրի-
շին ետեւէն: Փափաքիդ հասար, կշտացար,
աղէկ, գնա մարսէ:

ՀԱՆԴԻՍԱԿԱՆ ՄԸ

Յ. Դ. — Եւ յետոյ Պ. Ուրիշ հաճութա-
կան մը չարաչար անխիղճ է ուրանալու սո-
տիճան Ղալաթիոյ երգեցիկ խումբին արժա-
նիքը, սուղ ատենուան մէջ այնչափ արագ
զարգացում ցոյց տալուն, որ իրապէս կը
գնահատուի գեղարուեստական շրջանակնե-
րու մէջ ալ: Նուագահանդէսին մէջ ամէ-

նէն աւելի գնահատուեցան էքսերճեան դե-
ռատի քոյրերը, կեդրոնականի երգչախում-
բը եւ Մ Սթանօն: Բայց ասիկա խոստովա-
նելու չափ խղճատութիւն կարելի չէ սպա-
սել բնաւ «Ուրիշ հանդիսական մը» էն որ
իր ատենութեան, կիրքին եւ սուտին մէջ
այնչափ կոյր ու անխիղճ եւ իր բամբասան-
քին մէջ այնչափ գռեհիկ է: Կեդրոնականի
երգչախումբին նկատմամբ մեր անկեղծ խօս-
քերուն առթիւ իր նախատինքներն ու հայ-
հոյութիւնները կը բաւեն ո՛ր աստիճան գը-
ձուձ վարձկան մը ու ծախուած մըլլալուն
եւ ո՛ր աստիճան բարձրաբառառ տգէտ մը
ըլլալուն համոզուելու: Բայց ինչո՞ւ զբաղի իր
կարճամիտ ու անձկամիտ դատաստաններով:
Երբ սանձարձակ հայոյոյ մ'է երգեցիկ խում-
բին դէմ, ամէնէն գեղեցիկ ռեփլամն է խում-
բին համար, որ հարկաւ իրեն պէս տգէտէն
եւ ունայնամիտէն պէտք չսպասէր գնահա-
տութիւն ճաշակ: Պ. «Ուրիշ հանդիսական»
չարաչար չտես մ'է, հացկատակ մ'է, երբ
սուրճի խնդիր մը կը հանէ անամօթաբար,
որ պարզապէս պժգանք կ'ազդէ: Ներեցէք
որ «ցտեսութիւն» ըսելու չգիշանինք այլ-
եւ, մեր դէմ աղտոտ հայոյոյ մը ունենալ-
նուս համար:

ՆՈՅՆ

ՍՏԱՄՈՔՍԻՆ Ի ՆՊԱՍՏ

Աւագոս ելակները մաքրել

Ելակը շատ ատեն անձրեւներէ ետքը,
հողոտ կամ աւազոտ կըլլայ. եթէ չլուացուած
ուտենք՝ աւազը ակուններնուս մէջը կերթայ
ու ելակին ո՛չ համը կ'առնենք եւ ո՛չ հոտը.
իսկ եթէ լուանք, այն ատեն ալ խերը տես
ելակին:

Ինչպէ՞ս ընելու է ուրեմն:

Շատ դիւրին միջոց մը կայ պատրաստ:
Թաց մարմաշի (թիւլպէնտ) մը մէջ դնելու
է ելակները եւ թթութելու է աղւոր մը, այս
պարզ եղանակով հողը եւ աւազը որ ելակ-
ներուն վրայ փակած էին՝ մարմաշին կը փակ-
չին: Ելակները այս կերպով իրենց համը ու
հոտը կը պահեն եւ ձեզի կը թողունք ելակ-
ները բնականին պէս եւ կամ չաքարով ու-
տելը:

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԻԶՄԻՏ. — Բազաքիս Հայ Բողոքականաց հրաժարեալ. վերապատուելին, չատոնց զղջացած ըլլալով իր հրաժարումէն, այս անգամ կիրակէ օր գումարուած Գաւառ. Ժողովին մէջ, իգական սեռին քուէներուն ապաւինեցաւ, զինքը չ'սիրող ու չ'յարգող արական մեծամասնութեան պատճառելով մեծ ցաւ: Շիտակը կարելի չէ չ'ծիծաղիլ ընտրական այս նորօրինակ մեթոտին վրայ, նամանաւանդ երբ տեղի կ'ունենայ ան հազիւ 25 տունէ բաղկացած համայնքի մը մէջ:

ՍԿԻՒՏԱՐ. — Հեռալուսանկարին գիւտը, կանացի պօնիկ գլխարկներու ձեւը գտնուելէն անմիջապէս վերջ, տեղւոյս պընակները վերցնելու գաղափարը յղացուեցաւ: տեւականութիւն կը մաղթենք: (Աչքերնիդ լոյս Տիկիներ, ալ ժամուն մէջ բէշերնիդ վեր առնելու ամօթը վերցաւ Ծ. Լ.):

ԳՈՒՄԳԱՖՈՒ. — Թռէնին սթասիօնը գրական կաճառ կազմող կարգ մը միւսիւններէն կը խնդրուի որպէսզի փոխանակ գիրքի վրայ չգիրացածնին խօսելու տեղական քերթին վրայօք վիճաբանին:

ԱՏԱԲԱՂԱՐ. — Հանրահռչակ տիպ... արգործակալ Կարապետ Պուռմանին լուսանկարը Հանրագիտական ղրկուեցաւ, որպէս զի Բերայի սինէմաթօկրաֆին միջոցաւ ի ցոյց տրուի հանրութեան այս հետաքրքրական դէմքը: (Վեց ամիս բաժանորդ ըլլողին մուտքի տոմս ձրի... Ծ. Խ.):

ՊԱՀՋԷԳԱՖՈՒ. — Մինչեւ հիմա գիտէինք թէ՛ դեղագործին հաշիւին վրայ հարիւրին քսան զեղջ մը կ'լլուէր, բայց անցեալ օր հոս հարիւրին 60 զեղջ մը ընել փորձող պիչնէս մեկին եւ դեղագործին բարեկամ մը առաջիկա ըլլալով գնած երկու տուփ պիսքիւին տեղւոյն դեղարանը տարեր ու հոն դրամը իր տիրոջ գրպանը մտեր է: (Գուգ-կունճուք աչքդ կեօզ անուն նաւավար մը կար, կերեւայ թէ պիսքիւի՛ն տեղը բռնել կուզէ. Ծ. Խ.):

ԳԱՏԸԳԻՒՂ. — Հոս՝ քիչ մը քիչ ծիծաղելի չըլլար կոր մտածել թէ՛ կնքնակոյ վիպագիր պիգ-պրլիս միւսիւն, կարծելով թէ թերթերն ալ հայ-լայն մը ունին, որոշեր է իր գրութիւնները Իզմիրի պարբերականին ղրկել: (Սխալ էք հասկցեր ... հոս այդ զուռուպիներուն մէջ թալիկ տուող չը գտնուելուն համար է. Ծ. Խ.):

ԱԼԷՄՏԱՂԻ. — Տեղւոյս եղանակին բացումը կատարուեցաւ. Յովակիմ ազան ի հանգիստ իր փափկասուն յաճախորդներուն, որոշեր է ամէն մէկուն դէմքը եւ ձեռքերը քացախ քսել պառկած ժամանակին, որպէս զի սիրելիներէ կնքու կեր չըլլան: (Յովակիմ աղա, գալ կիրակի կուգամ կոր, պօլ պօլ կը տեսնուինք. Ծ. Լ.):

ԳՈՒՄԳԱՖՈՒ. — Կերակի օրուան Չուլ-հանան Եհնավեց եռաձայնին համար կարգ մը տիկիներ եւ օրիորդներ թաղէ պուզ կարելու վրայ են: (Աման չ'ուտ, իրնթիւնները ժամը կը քակէք. Ծ. Լ.):

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԹՈՒԼԲԵՐԱՆՈՒԹԻՒՆ

Մեր յաջորդ քիւր հրատարակ պիտի ելի Հիմեցաբքի առաւօս, Համբարձման տօնին առթիւ:

Մեր բազմաթիւ համակիրներուն գոհացում տալու համար՝ խմբագրութիւնս որոշած է առանց սովորական գինի վրայ բան մը աւելցնելու հրատարակել խիստ խնամեալ քիւմը, հետեւեալ աւիստակիցներով.

ՏԻԿԻՆ Ա. ԹԷՈԴՈՒՆ
ԶԱԶԱ
Ե. ԱԼՓԻԱՐ
Ե. ԹՕԼՕՅԵԱՆ
ԱՐՇԱԿ ՄՍՐԼԵԱՆ
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԱՅԵԱՆ
ՆԵՐՇԱՊՈՒՀ

ԵՆ

ԼԻԼԱ

Արտոնաւոր ԱՐՄԷՆ ԼՈՒՐԵՐԱՆ

ՏՊԱԴՐ. Ե. ԱՍՍՏՈՒՐԵԱՆ

Պապը-Ալի հասէսի քիւ 52.

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՈՅՐԱԾԱԾՈՒՆՆԵՐ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Գ. Պոլիս, Սուրբան Համան, Թոփաչեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիններէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց
տոկոսութեամբ և գինեւուն անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
դիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց քելոններու
և տղայոց չիք և դիմացկուն փոքրիկ-
ներու ճոխ միջերը մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի և ուրիշ նման-
ըինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 ղրշ. է:
Գաւառներէն յանձնարարութիւնը
փութով կը կատարուին: 50—34



ԱՌԻԹԷՆ

ԼՕԴՏՈՒԵՑԷՒՐ

ՊՓՈՒԹԱՑԷՒՐ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԴՈՒԼԵԱՆԻ

[Ճեպալ պէյ խանին]
տակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյանէ,
Չինաստանէ, Հնդկաստանէ, Ճապոն եւ Ճա-
թոնէ:

Ամենէն գոյաւորահոգներն իսկ կըրձ
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովը ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յաճ
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ և փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մատային:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԳ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷԶԵՐՈՎ ԵՒ ԶՈՒՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՍՈՒԱԾ

Կ. Պոլսոյ համար սարեկան բաժնեգին	50 ղրշ.	Վեցամսեայ	25 ղրշ.
Գաւառաց համար	» 54 »	»	27 »
Արսասահման	» 12 Ֆր.	»	6 Ֆր.

Կ Ա Ն Ի Ի Կ

ՀԱՍՑԷ՛

ՊԱՆԴԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ, Պապը-Ալի հասկսի Ասատուեան տպարան քիւ 52.

Գաւառներու մէջ յգործակալներ կը փնտռուի, պայմանաւ որ երաշխաւոր մը ցոյց տան
թէ միշտ նոր բաժանորդներու անունին և հասցէին կցեն նաեւ բաժնեգինները:

Դրամները պէտք է ղրկուին կամ Օսմ. Մանտաքութով և կամ բոսթայի փութով 20 հոգ
20 ղրուշի հաշուով:

ՄԵԾ ԿԱԶՄԱՏՈՒՆ ՀԵՐԵԹԻԿ ՊՅՅԱՃԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի ցասէսի բիւ 50

Սոյն առաջնակարգ կազմատունը՝ որ մօտ երեսուն տարուան հաստատութիւն մըն է, իր գեղեցիկ գործերովը, մաքրութեամբը և արագութեամբը արդէն մեծ համբաւ չահած և գրաւած է վըստահութիւնը ամէն անոնց՝ որոնք փորձով հաստատած են այս առաւելութիւնները:

Հերեթիկ էֆ. Պօյաճեան այս անգամ Եւրոպայէն բերել տուած ըլլալով արհեստին կատարելագործեալ կարգ մը մեքենաներ, այսօր ի վիճակի է մրցիլ մայրաքաղաքիս բոլոր կազմարարներու արտադրած գործերուն հետ:

Անգամ մը փորձելը բաւական է:

ԳԱՌՆԻԿ ՔԵԾԻՇԵԱՆ

ՆՈՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Կ. Պոլիս Հանօ-Բուլօ խան իբւ 2

Նախ փորձառուները, յետոյ խառնողները միայն գիտեն էթ ո՛րչափ դժուար է, դռնել ու գնել ապրանքներ՝ որոնք թէ տոկուն ըլլան՝ թէ ճաշակաւոր և թէ . . . աժան:

Գառնիկ Քէչիշեան վաճառատունըս թօհաֆիէի էն առաջնակարգ Եւրոպական գործարաններէն բերել տուած է տեսակ տեսակ կանանց և արանց յատուկ Ֆանելաներ, գուլպաներ, քաւիկներ, ձեռնոցներ, փողկապներ, բոթեղներ, Ֆիլթրօս և խիստ ճաշակաւոր ցերգնաւապիկներ, գլխու շարքեր, քաւ ֆոսֆէներ ևլն. ևլն.

Զերմապէս կը յանձրարենք անգամ մը այցելել այդ վաճառատունը, ուրկէ անպատճառ գոհ մնացողներ միշտ հոն գիմելով պիտի հաստատեն թէ՛ գիներու աժանութեան, քեսակի ազնուութեան և ապրանաց տոկունութեան երեք առաւելութիւնները ուրիշ ո՛ր և է տեղ կարելի չէ գտնել: